



TOPICAL DIALOGUES

«Ռեզիոն» հետազոտական կենտրոնի ծրագիրը

ՀՐԱՏԱՊ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին

N 2

2015

Սույն տեղեկագիրը պատրաստվել է «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակի կողմից ֆինանսավորված «Հրատապ երկխոսություններ Հայաստանի ինտեգրացիոն նոր օրակարգի մասին» ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված կարծիքի, եզրակացության կամ առաջարկության համընկնումը ԱՄՆ կառավարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:



Մենք ինտերնետում՝

www.regioncenter.info

www.publicdialogues.info

<https://www.facebook.com/RegionCenter?fref=ts>

Ռուսաստան - Հայաստանն այսօր. Իրականություն եւ ընկալումներ

«Ռեգիոն» հետազոտական կենտրոնի

կայքում (www.regioncenter.info) ընթացած ինտերնետ-կոնֆերանսի նյութեր

Հետևյալ ու մի շարք այլ հարցեր են քննարկվել «Ռուսաստան-Հայաստանն այսօր. իրականություն եւ ընկալումներ» ինտերնետ-կոնֆերանսի ընթացքում, որն անցավ 2015 թ. փետրվարի 23-25-ին:

- Ի՞նչպես է ազդում Ռուսաստանի գործոնը Հայաստանի ներքաղաքական եւ հասարակական կյանքի վրա:
- Հայաստանի եւ Ռուսաստանի ի՞նչ ընկալումներ կան մեղիա հարթակներում եւ հասարակության մեջ:
- Հայ-ռուսական հարաբերությունների վրա ի՞նչ ազդեցություն են գործում Ռուսաստանի ներքին, նաեւ՝ Ռուսաստանի եւ Ուկրաինայի, Ռուսաստանի եւ արեւմտյան մի շարք երկրների միջեւ ընթացող գործընթացների ֆոնը:
- Ի՞նչ են հասկանում Ռուսաստանում եւ Հայաստանում «հակառուսաստանյան» եզրից:
- Կա՞ իսկապես այսօր փոխադարձ ընկալումների, Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ գործընկերության տրենդ, ինչպե՞ս է այն դրսևորվում, ի՞նչ պատճառով է այն տեղի ունեցել:

Կոնֆերանսին մասնակցեցին մասնագետներ Ռուսաստանից եւ Հայաստանից.

Սերգեյ Մարկեդոնով – Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի դոցենտ, քաղաքագետ (Ռուսաստան),

Արկադի Դուբնով – քաղաքագետ, ԱՊՀ երկրների մասնագետ (Ռուսաստան),

Սերգեյ Սարգսյան – «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փոխտնօրեն, պահեստի փոխգնդապետ (Հայաստան),

Բորիս Նավասարդյան – Երեւանի մամուլի ակումբի նախագահ (Հայաստան),

Կոնֆերանսը վարում էր «Ռեգիոն» հետազոտական կենտրոնի տնօրեն Լաուրա Բաղդասարյանը (Հայաստան):

Հետաքրքրության ասիմետրիայի մասին



Մերգեյ Մարկեդոնով – Իմ կարծիքով շատ կարևոր է հասկանալ Մոսկվայի եւ Երևանի փոխհարաբերությունների ընկալումների ասիմետրիան: Եթե ռուսաստանյան արտաքին քաղաքականության համար հայկական ուղղությունը, թեև կարևոր, բայց բազմաթիվ այլ (իսկ երբեմն ամենեւին էլ ոչ առաջնահերթ) հարցերից մեկն է, ապա Հայաստանում ռազմավարական գործընկերոջ քայլերը քննվում են լուսարձակների տակ:



Լատրա Բադասարյան – Հայաստանի եւ Ռուսաստանի փոխադարձ հետաքրքրվածության ասիմետրիան իսկապես պայմանավորված է բազմաթիվ լուրջ գործոններով, կոնկրետ այս դեպքում՝ ռազմական եւ այլ բնագավառներում քաշային տարբեր ցուցանիշներով: Բայց կան երկկողմանի պայմանագրեր, որոնցով սահմանվել են խաղի փոխընդունելի կանոններ:

Հարց ունեմ. ինչու՞ «բանավեճը», թե կողմերից որը պետք է հետաքննի Գյումրիում զինվորականի հանցագործությունը Մոսկվայի պաշտոնական եւ ոչ պաշտոնական շրջանակները համարում են իրավիճակի քաղաքականացման փորձ, կամ էլ՝ ինչու՞ են մեջտեղ բերվում պնդումներ, որ եթե ԱՄՆ-ն երբեք իր զինվորներին չի հանձնել այլ երկրների արդարադատությանը, ուրեմն Ռուսաստանն էլ պետք է նման ձեռով վարվի, «չէ որ դա Ռուսաստանի ինքնիշխանության հարց է»:

Ի՞նչ եմ ուզում ասել: Այն, որ ռուս-հայկական հարաբերություններում «վթարային» իրավիճակները երրորդ կողմի դավադրություն չէ, եւ նույնիսկ Ռուսաստանի ամեն մի քայլը խոշորացույցի տակ պարանոհի դիտարկման հետեւանք:

Խոսքը Հայաստանի անվտանգության կարևորագույն խնդիրների մասին է, որոնց շարքում նաեւ 102 ռազմակայանն է:

Գրգռիչներ. Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ ռազմական համագործակցության մասին



Սերգեյ Մարկեդոնով – Ինչ վերաբերում է Բաքվի եւ Մոսկվայի միջեւ համագործակցությանը... Հասկանում եմ , որ այս հարցը ծայրաստիճան հիվանդագին է ընկալվում Երեւանում: Բայց ամեն դեպքում փորձեմ որոշ բացատրություններ տալ.

1. 2008 –ի «հնգօրյա պատերազմից» եւ (Աբխազիայի ու Հարավային Օսիայի – խմբ.) անկախության ճանաչումից հետո զգալիորեն նվազել է Թբիլիսիի վրա Մոսկվայի ազդեցությունը: Այս իրավիճակում խիստ ռիսկային է միայն Երեւանի վրա հենվելը, կամ հակառակը՝ դեպի Բաքու վերակողմնորոշվելը: Այս դեպքում Անդրկովկասի երեք երկրներից երկուսը Ռուսաստանի համար կորած կլինեն: Մաներումները սրանից են գալիս:

Աշխարհագրությունը ոչ ոք դեռ չեղյալ չի հայտարարել: Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ ցամաքային սահմանի դադստանյան հատվածը 284 կմ է, եթե չխոսենք նույնիսկ Կասպից ծովի ավազանի մասին:

2. Մոսկվայի համար Բաքուն ռազմավարական գործընկեր է, իսկ Երեւանը՝ ռազմավարական դաշնակից: Եթե վեր կանգնենք որոշ քարոզչական կլիշեներից, ապա նման սահմանումներն այնուամենայնիվ որոշ իմաստ ունեն:

Մոսկվայի համար կարեւոր է Հարավային Կովկասում ստատուս-քվոն: Եվ Մոսկվայի տեսանկյունից Ադրբեջանին զենքի մատակարարումը (որքան էլ սա ցինիկ հնչի որեւէ մեկի համար) առայժմ չի բեկում ուժերի եւ ռեսուրսների ներկա հարաբերակցությունը: Եվս մեկ բան: Կատուր է հասկանալ, թե ինչն է առաջնահերթ, իսկ ինչը՝ հետեւանք: Բաքուն զենք ձեռքբերելու համար զգալի ֆինանսական միջոցներ ունի, եւ եթե չլինի Ռուսաստանն, այս հարցում գործընկեր կգտնի, հիշենք թեկուզ իսրայելա-ադրբեջանական գործարքի մասին:

Մոսկվայի ու Բաքվի միջեւ գործընկերությունը չի դիտարկվում որպէս դեպի մերձկասպյան երկիր վերակողմնորոշում:



Լաուրա Բադալյան – Բանաձեռը («ձեզ համար ի՞նչ տարբերություն, թե Ադրբեջանին ո՞վ զենք կվաճառի, Ռուսաստանը, թե՞ Իսրայելը») հայերի համար համոզիչ չէ: Քանի որ եթե ռուսական ռազմակայանի ներկայությունը ուղիղ կապվում է «Ռուսաստանը Ադրբեջանի եւ Թուրքիայի առաջ Հայաստանի անվտանգության երաշխավորն է» թեզի հետ, ապա զենքի մատակարարումը Ադրբեջանին, որն այդ նույն զենքն ուղղում է Հայաստանի դեմ, իսկ ավելի լուրջ սահմանային բախումների դեպքում՝ նաեւ ռուսական ռազմակայանի դեմ, ոչ մի կերպ չի կապվում ոչ այդ թեզի հետ, ոչ էլ մանավանդ ԵԱՀԿ ՄԽ-ում Ռուսաստանի համանախագահության հետ:

Գյումրիի 102 ռազմակայանի մասին



Արկադի Դուբնով – Ռուսաստանի պաշտոնական եւ կիսապաշտոնական շրջանակների՝ Գյումրիի ահավոր ողբերգությունը քաղաքականացնելու նախատինքների մասին: Այս խնդրի քննարկումը, եթե դա ազնվորեն կատարվի, մեզ կհասցնի մինչեւ ավելի լայն՝ ռուսաստանյան քաղաքականության արժեքների հարցը:

Այստեղ պատրաստ էին հայերին քաղաքականացման մեղադրանքներ ներկայացնել, քանի որ ի վիճակի չէին խոստովանելու, որ ողբերգությանը հաջորդած առաջին ժամերին ունակ չէին գնահատելու կատարվածը մարդկային առումով, հասկանալու, թե որքան կարեւոր էր զոհերի, նրանց հարազատների հասցեին ամենաբարձր պետական մակարդակով կարեկցանք արտահայտելը, գնահատելու նաեւ այն առումով, որ հայերը զոհվել են մարդկանց ձեռքով, որոնց ներկայությունը կոչված է ապահովելու նրանց անվտանգությունը: Ռուսաստանյան բավական ցինիկ իշխող վերնախավի ներկայիս սերունդի մեջ չես գտնի այն «արտասվող բոլշեիկներին», ինչպիսին խորհրդային վարչապետ Նիկոլայ Ռիժկովն էր, որը լայն համբավ էր ստացել Հայաստանում 1988 թ. երկրաշարժից հետո: Խնդիրն այն է, որ մենք հաճախ ենք փոխարինում հասկացությունները, եւ պարզ խղճահարության ու մարդկային պարկեշտության բացակայությունը քողարկում ենք քաղաքականացնելու նախատինքներով...



Բորիս Նավասարդյան – Ինձ հետաքրքրում է «հետագայում ինչ անել» հարցը: Եվ այստեղ երկու տարբերակ եմ տեսնում:

Առաջինը (քիչ հնարավորը). ռուսաստանյան կողմը գտնում է սեփական Սահմանադրությունն այնպես մեկնաբանելու հնարավորություն, որ Պերմյակովն այնուամենայնիվ հանձնվում է ՀՀ արդարադատությանը:

Երկրորդ տարբերակը (միակ ռացիոնալ այլընտրանքը). վերանայվում են ինչպես ռազմակայանին, այնպես էլ սահմանապահներին վերաբերող պայմանագրային հիմնադրույթները, որպեսզի բացառվեն այդ փաստաթղթերի հակասությունները երկու երկրների

Սահմանադրությունների հետ: Եթե ՌԴ քաղաքացիների ՀՀ տարածքում կատարված հանցագործությունները, անկախ հայաստանյան իշխանությունների կամքից, Ռուսաստանի որոշ կառույցների գործողությունների արդյունքում կարող են եւ չընկնել հայկական հետաքննական եւ դատական մարմինների իրավասության տակ, ուրեմն ռուսաստանյան ուժային կառույցները չպետք է իրավունք ունենան ինքնուրույն իրականացնելու օպերատիվ-որոնողական միջոցառումներ իրենց սոցիալական օբյեկտների սահմաններից դուրս: Իսկ ռուսաստանյան զինվորականների ու սահմանապահների՝ իրենց հատուկ օբյեկտների սահմաններից դուրս գալու ամեն մի դեպք պետք է համաձայնեցվի ՀՀ իրավասու մարմինների հետ:

Ցավոք, ես չեմ հավատում, որ կարգապահության մակարդակի բարձրացումը, անձնակազմի համալրումը միայն պայմանագրային զինձառայողներով կարող է խնդրի սկզբունքային լուծում լինել: Իսկ ամեն մի նոր միջադեպ կդառնա հասարակական դիսկուրսում առհասարակ ռազմակայանի ներկայության հարցը բարձրացնելու առիթ:



Արկադի Դուբնով - ...Պատկերացրեք, որ ռուսաստանցիները ռազմակայանը դուրս բերեցին նույնքան վճռականորեն, որքան դա արեցին ամերիկացիները Ղրղզստանում Մանասի, կամ Ուզբեկստանում Կարշի-Խանաբադի հետ: Հաշվի առնենք, որ դրանք ի սկզբանե տեղակայվել էին Աֆղանստանում ամերիկյան գործողության ժամանակահատվածի համար: Միջանկյալ արդյունք. Բիշքեքը վերջնականապես կորցրեց իր տարածաշրջանային խաղացողի կարգավիճակը, հնարավոր է դրա գինը կլինի հեռավոր, բայց տեսանելի ապագայում ԵՄՍՄ անդամագրումը: Իսկ Ուզբեկստանն այսօր, փորձելով հեռու մնալ Մոսկվայում անվտանգության երաշխիքներ փնտրելու անհրաժեշտությունից՝ ստիպված է վերադառնալ ԱՄՆ-ի հետ ավելի մերձեցմանը: Այս կարգի կուլբիտները թանկ են նստում: Պե՞տք է արդյոք ռիսկի ենթարկել Հարավային Կովկասում անվտանգության արդեն ձեռավորված համակարգը, գուցե ավելի պրակտիկն այսօրվա իրողություններին այդ համակարգի ադապտացումն է:

...Երբ 8 տարի առաջ Բիշքեկի մերձակայքում գտնվող Մանաս ռազմակայանում պահակություն անող զինվորականը կրակեց ու սպանեց Իվանով ազգանունը կրող ղրղզացի վարորդին, ադմյոտ հետաքննություն եղավ, Ղրղզստանի իշխանություններն ամեն ինչ արեցին, որ ստիպեն իրենց հարգանքով վերաբերվեն: Արդյունքում ամերիկացի զինվորականները, որոնք Բիշքեկում իրենց բավական ազատ ու անլուրջ էին պահում, զրկվեցին նույնիսկ ռազմակայանից դուրս գալու հնարավորությունից: Բայց դրա հետ մեկտեղ իրենք էին դատում վարորդի վրա կրակած իրենց զինվորականին...



Մերգեյ Սարգսյան – Ցավոք ստիպված եմ փաստել, որ նույնիսկ կարգապահության համակարգային բարձրացումը, անձնակազմի հետ մշտական աշխատանքը հնարավոր կդարձնի կրճատել միայն մանր իրավախախտումների քանակը, ինչն արդեն լավ է: «Ապահովիչներ» նման ողբերգություններից գոյություն չունեն: Հետաքննության մասին. դարձյալ, ցավոք մինչ այդ տեղի ունեցած հանցագործությունները դասվել են «նման բան այլևս չի լինի»-ի շարքին, իսկ արդեն այդ ժամանակ ակնհայտ դարձած իրավաբանական հակասությունները չեն վերացվել: Հիմա այս ռեզոնանսային ողբերգությունը պետք է ուղղում մտցնի նախորդ «հարթեցումների» մեջ:

Ընկալումների եւ օպերատորների մասին



Բորիս Նավասարդյան – Այն, որ Ռուսաստանի քաղաքացիները Հայաստանը չեն նշել որպես դաշնակցի¹, կապված է նաեւ այն բանի հետ, որ Հայաստանը որպես ինքնիշխան երկիր չի ընկալվում: Կրկնեմ, ի՞նչ դաշնակից, եթե ոչ մի դերակատարություն չունի միջազգային գործերում: Ինքը՝ Վլադիմիր Պուտինը մի շարք էպիզոդներում մոռանում էր, որ Հայաստանը արտասահմանյան երկիր է (օրինակ՝ արտասահմանյան ռազմակայանների մասին խոսելիս նա չթվարկեց 102-ը...): Այս ամենի բազմաթիվ դրսեւորումները, որոնց չեմ անդրադառնում ժամանակի ինայոդության համար, փոխում է նույնիսկ այն մարդկանց տրամադրվածությունը, որոնք անգամ լսել չեն ուզում Արեւմուտքի եւ Եվրոպայի մասին:

Արդյունքում՝ ռուսաստանյան («եվրասիական») ընտրության հանդեպ լոյալությունը պահպանած մարդկանց շրջանում զգալի մաս են կազմում նրանք, ում համար ազգային ինքնիշխանությունը արժեք չէ, կամ էլ՝ ով գտնում է, որ ավելի ճիշտ է «տեղը նստած մնալ» խառը ժամանակներում:



Արկաղի Դուբնով – ...Ռուսաստանում Հայաստանի ընկալման մասին: Կարծում եմ, որ եթե Ռուսաստանում հարցումն անցկացվեր Գյումրիի ռդբերգությունից հետո, արդյունքն այլ կլիներ, հնարավոր է ավելի նեգատիվ: Ռուսաստանում հասարակական կարծիքը պլաստիլինային է եւ գլխավորապես ձեւավորվում է հեռուստատեսության միջոցով, որտեղ այդ դրաման պրակտիկորեն անուշադրության էր մատված: Մեր քարոզչությունը չի կարողանում համարժեք արձագանքել: Հատկապես, եթե դա կապված է արտասահմանում Ռուսաստանի իմիջի հետ: Մյուս կողմից՝ հենց հունվարին Հայաստանի մասին հիշատակումները հաճախ դրական երանգավորում ունեին ԵՄԵՄ պայմանագրի ուժի մեջ մտնելու հետ կապված: Իսկ ընդհանուր առմամբ, իհարկե Հայաստանը ռուսաստանյան հասարակական ուշադրության արվարձաններում է, եւ այստեղ ոչ մի ցավալի բան չկա, վերաբերվենք դրան որպես աշխարհագրական փաստի, ըստ որի Ռուսաստանն ու Հայաստանը ընդհանուր սահմաններ չունեն...

¹ Խոսքը Ռուսաստանի քաղաքացիների շրջանում 2014թ. վերջում անցկացված հարցման մասին է, որոնց արդյունքներով Հայաստանը հայտնվել էր Ռուսաստանի համար բարեկամ երկրների շարքի 10-րդ հորիզոնականում – խմբ.:

Իսկ ահա ինչը նկատելի էր (եւ դա ավելի շատ խոսում է ոչ թե Հայաստանի, այլ Ռուսաստանի մասին), զարմանալիորեն քիչ ռուսաստանահայեր գտնվեցին, որոնք խիզախեցին հրապարակայնորեն դատապարտել Գյումրիի մորթը հրապարակայնորեն դատապարտող ելույթներով: Հիմնականում նրանք ջանում էին չափազանց լոյալ ՌԴ քաղաքացիների տեսք ունենալ՝ հայրենասիրական մեյնսթրիմից դուրս չմնալու իրենց ձգտումներով: Սա բավական զցուն կերպով բնութագրում է Ռուսաստանի քաղաքացիական հասարակության ներկայիս վիճակը:



Մերգեյ Սարգսյան – Ռուսաստանից տարբեր «գուրունների» մասին... նրանց հետ հանդիպելիս մենք ինքներս պետք է ավելի ընտրողական լինենք: Այստեղ մեծ դեր ունեն ՋԼՄ-ներով նրանց ներկայացնելը, նաեւ ՀՀ փորձագիտական հանրույթի կողմից նրանց եւ նրանց գաղափարների նկատմամբ բարյացակամ-բարեկիրթ, բայց նաեւ կոնստրուկտիվ քննադատական վերաբերմունքը:

Մյուս կողմից՝ չէ՞ որ ժամանումից առաջ նրանք խորհրդակցում են Ռուսաստանի փորձագետների կամ տեղացի հայ վերլուծաբանների հետ (համենայնդեպս՝ պետք է չէ՞ խորհրդակցեն): Ու հետաքրքիր է, այդ ընտրության չափանիշները որո՞նք են:



Արկադի Դուբնով – Մերգեյ Սարկեղոնով, Դուք լիովին իրավացի եք, երբ խոսում եք Երեւանում տարբեր «կիսեյտվներին» որպես Կրեմլի խոսափողներ ընկալելու մասին, ինչը հաճախ չի համապատասխանում իրականությանը:

Բայց սա իրականությունն է, որն այդպիսին է Երեւանում, Աստանայում, Բիշքեկում եւ նույնիսկ Քիշնեւում... Ու հայերի, դազախների, մոլդովացիների եւ դրոզների համար դժվար է, գրեթե անհնարին է մեղսունակ խոսնակներին անմեղսունակներից տարբերելը, մանավանդ, որ վերջիններս հաճախ են մեկնում թվարկածս մայրաքաղաքներ քաղաքականություն անելու:

Ընկալումների միջեւ ասիմետրիան... Այո, իհարկե, Մոսկվայում դժվար թե որեւէ մեկը լրջորեն վերաբերվի հետխորհրդային երկրների խոսնակներին, եթե նրանց այդպիսին չընկալեն Կրեմլում: Իսկ հետխորհրդային մայրաքաղաքներում, հակառակը՝ չգիտես ինչու Մոսկվայի խոսնակներ են դառնում միայն «Ռուսական աշխարհի» կայսերականները, ինքս եմ դա դիտարկել...

Ուզում եմ ասել որ այս խնդիրը երկար է տևելու, մինչև Կրեմլի «վերականգնողական» կոնցեպտը իր տեղը չզիջի ավելի հանդուրժողական պարադիգմի:



Սերգեյ Սարգսյան – Հաշվի առնելով ՁԼՄ-ների՝ կոշտ նեգատիվ լուրերի հարցում հատուկ մարզվածությունն, արդեն լավ է Ռուսաստանի մեդիահարթակում Հայաստանի բացակայությունը: Ի դեպ, սա լավագույնս կարող է բացատրել, թե ինչու հարցումների արդյունքներով Հայաստանը չմտավ Ռուսաստանի բարեկամների թոփ ցուցակի մեջ: Սկզբունքորեն, սա այնքան էլ մեծ բան չի նշանակում: Այլ հարցումներով՝ հայտնվում է չէ՞: Ուրիշ բան, թե կա՞, արդյոք, նման ասիմետրիայի առիթով դժգոհություն կամ այդ պատճառով մտահոգվածություն: Ուզո՞ւմ է Հայաստանը մեծացնել իր ներկայությունը ռուսաստանյան ՁԼՄ-ներում: Ո՞վ է ուզում, ինչի՞ համար: Եվ ինչպե՞ս հասնել դրան, առանց կոնֆլիկտի լարվածության մեծացման, առանց երկրաշարժի, տեխնոգեն աղետների կամ այս կարգի ուրիշ դրամատիկաների:

Ընդհանուր կլիշեներով ու տրաֆարետներով



Սերգեյ Մարկեդոնով – Ռուսաստանում Հայաստանի, իսկ Հայաստանում՝ Ռուսաստանի մասին մեդիա պահանջումները... Դրանք իհարկե պաշտոնապես չեն ձեւակերպված եւ ոչ մի դեկրետով չեն ներմուծված: Բայց դրանք կան ազդեցիկ պաշտոնյաների եւ բարձրաստիճան առաձնասենյակներ ելուժուտ անող մարդկանց գլուխներում:


Ռուսաստանյան ներկայացուցիչները հայաստանյան մեդիայում կուզեին ավելի մեծ սատարում գտնել ռուսաստանյան արտաքին քաղաքականության հանդեպ ընդհանուր առմամբ, լինի դա Ղրիմը, թե Դոնբասը, Վրաստանը, թե Արեւմուտքի հետ հարաբերությունները: Իհարկե, այստեղ անտեսվում են Հայաստանում գոյություն ունեցող որոշ սահմանափակումներ. դրանք հասկանալի են եւ դժվար թե իմաստ ունի մանրամասն նկարագրելու:

Այստեղ տրամաբանությունը հետեյալն է՝ եթե դու դաշնակից ես, ապա բարի եղիր ավելի ակտիվ դրսեւորելու քո դաշնակցային զգացմունքները եւ ուրիշ կողմ մի նայիր: Իսկ Հայաստանում կա հենց նյուանսների (սահմանափակումների) ընկալունակության պահանջումք: Այստեղ կա որոշակի հակասություն:

Իսկ ահա երկու կողմերի պահանջումները համընկնում են դաշնակցայնության ցուցադրման հարցում: Եթե դաշնակից ես, ապա բարի եղիր բացատրիր, թե ինչի՞ դ են պետք Բաքուն ու Անկարան, պարզաբանիր դիրքորոշումդ, մի հեռացիր պատասխանից: Այսինքն՝ կա հակասություններն ու չասվածությունը պարզաբանելու որոշակի ձգտում, որոնք հաճախ լատենտ, ոչ ակնհայտ բնույթ են կրում, սակայն դրանից միեւնույն է չեն դադարում հակասություններ լինել:



Բորիս Նավասարդյան – Կտրականապես համաձայն չեմ ԵՄ-ի հետ ասոցիացման պայմանագրերի մասին պնդումների հետ: Եթե «ընդհանուր շաբլոններ» ասելով հասկանում են ոչ թե փաստաթղթի սխեման, կառուցվածքը, այլ այն, ինչը «ներսում է», ապա տեքստերն էապես տարբերվում են, հատկապես Հայաստանի դեպքում, որտեղ փաստորեն չկա ԵՄ-ին անդամագրվելու, անվտանգության միասնական համակարգի ձեւավորման հեռանկարը: Էապես տարբեր է էներգետիկ անվտանգության կոնցեպտը: Ի տարբերություն ԵՄ-ի փաստաթղթերի՝ ասոցիացման բանակցային կողմերը պատրաստվում էին իրականացնել պայմանավորվածությունները: Եվս մեկ անգամ կրկնեմ, հատկապես Հայաստանի դեպքում, որի ներկայացուցիչներն ինտենսիվ ու մանրամասն բանակցությունների ողջ ընթացքում ընկալում էին դրանց մասնակցելու անգամ փաստի ողջ նրբությունը, ուշադիր կարդում, ծանր ու թեթեւ էին անում ամեն մի տառը: Իսկ ռուսաստանյան քարոզիչները, ներառյալ այն մակարդակի պաշտոնյաները, ինչպիսին Գլազեն է, գիտակցաբար խեղաթյուրում էին գործընթացի եւ պայմանավորվածությունների էությունը՝ հորինելով այնպիսի միջեր, ինչպիսին Ուկրաինայի հետ կապ ունեցող շաբլոններն էին եւ այդ կերպ կեղծ պատկերացումներ էին ձեւավորում Ռուսաստանում ու Հայաստանում:



Մերգեյ Սարգսյան – Հենց բանն էլ դա է, որ «ամեն մի տառը ծանր ու թեթեւ արված փաստաթուղթ», որտեղ «փաստորեն չկա ԵՄ-ին անդամագրվելու, անվտանգության միասնական համակարգի ձեւավորման հեռանկար» համաձայնեցվում էր խոր գաղտնիության (կոնսպիրացիայի՞) պայմաններում: Ուրախ եմ, եթե մեր հայ մասնագետները այն կարդացել ու ուսումնասիրել են: Ի տարբերություն Ուկրաինայի ու Մոլդովայի իրենց գործընկերների: Կարծում եմ տեղական ԶԼՄ-ները (եւ մեր, եւ ուկրաինական ու մոլդովական) կարող էին գտնել գոնե մի քանի նման մասնագետների, որոնք ի վիճակի կլինեին մասնագիտական մակարդակով շահագրգիռ լսարանին ներկայացնել եւ ռազմավարական նշանակության

այդ փաստաթղթի բովանդակությունը, եւ «ամեն մի տառը ծանր ու թեթեւ անելու» գաղտնիության ռեժիմը: Եվ ես ապրանքների կոնկրետ տեսականիի մաքսատուրքերի մասին մի պարզ հարցի պատասխանը ստանալու համար ստիպված չէի լինի զանգահարել համապատասխան նախարարություններ, ընդհանուր ծանոթներ փնտրել, ի վերջո նրանցից մեկին գտնել, որը դեռ շարունակվող գաղտնիության պայմաններում պատասխանեց. «Իսկ ով գիտի»: Դե համարենք, որ ես վատ եմ փնտրել, կամ իմ ծանոթները պահանջվող մակարդակից, կամ խմբից չէին: Ու կարելի էր նաեւ ժամանակին չեզոքացնել միֆն (՝) այն մասին, որ Հայաստանից ԵՄ-ն պատրաստ է ստանալ մեր շոպլ արեւի տակ աճեցրած ու սերտիֆիկացված կիվի ու բանան, նաեւ խոսել Հայաստանից ատլանտյան ձողաձկան էքսպորտի նորմատիվների բարձրացման մասին:



Մերգեյ Մարկեդոնով - Այսօր հայ-ռուսական հարաբերությունների վրա ավելի շատ քան երեկ ազդում են ֆոնային գործոնները: Իսկապես, կգնա ռուկրահնական ճգնաժամը նեգատիվ սցենարով (հնարավոր են նոր պատժամիջոցներ, եւ «միջնորդական պատերազմ», եւ տհաճ էլի շատ բաներ), ու անխուսափելիորեն օրակարգում կբարձրացվի «հարցի գնի» խնդիրը:

Ամենեւին էլ փաստ չէ, որ անբարենպաստ սցենարի դեպքում ԵԱՏՄ-ն էլ մոնոլիտի պես կկանգնի (Լուկաշենկոն արդեն իր սեփական հետաքրքրությունն ունի «ազնիվ բրոկերի» դերի հարցում): Իսկ եթե, հակառակը, իրավիճակը բերի Դոնբասում կոնֆլիկտի եթե ոչ լուծմանը, ապա գոնե «սառեցմանը» եւ Արեւմուտքի ու ՌԴ միջեւ հարաբերությունների պրագմատիզացմանը, ուրեմն եւ Երեւանում ավելի քիչ մտավախություններ կլինեն Ռուսաստանի՝ որպես վստահելի ու կանխատեսելի դաշնակից լինելու հարցում:

Դեռ մեկ տարի առաջ այսպիսի արտաքին քաղաքական կախվածություն չկար (ֆոնային գործոնների ազդեցություն միշտ եղել է, բայց 2015 -ինն անհամեմատելի է):



Լաուրա Բաղդասարյան – Այդ ոգով էլ անցավ նաև Գյումրիի ողբերգությունից հետո հասարակական բողոքների լուսաբանման առաջին տեղեկատվական կամպանիան. «մայդան Հայաստանում», «հինգերորդ շաբաթուն», որի աստեղնային ժամը եկել է, քանի որ կա առիթ ընկալունակ դարձնելու ռուսաստանյան ռազմակայանը դուրսբերելու մասին կոչերի նկատմամբ եւ այլն: 102 ռազմակայանի հետ կապված պատմության գուգորդումը կամ կապումը այնպիսի սյուժեների հետ, որոնք իրականում գոյություն չունեն Հայաստանում: Չգիտեմ էլ թե սրան ինչպես պետք է վերաբերել. որպես Ռուսաստանում ընդհանուր տեղեկատվական ֆոնի իներցիայի՞, որը գործում է նաև հայկական ուղղությունում, թե՞ որպես հատուկ կամպանիաների, ագրեսիվ զոնդավորման միջոցով Հայաստանի հասարակության իրական տրամադրությունների շոշափման:



Արկադի Դուբնով – Գյումրիի ողբերգության այն մեղիաուղեկցումն (ինչի մասին խոսում է Լաուրան - «մայդան», «հինգերորդ շաբաթուն» եւ այլն) ապահովեցին իշխանության կողմից վերահսկվող ռեսուրսները, հիմնականում հեռուստատեսությունն ու «Կոմսոմոլկայի» նման պարբերականները: Իսկապես այդ կարգի մեղիաուղեկցումների միջոցով ձեւավորվում է ՌԴ նախագահին աջակցողների 84%-ը:

Բայց արդյո՞ք նրանց «հայերենը» Հայաստանի իմիջի ձեւավորման հիմնական գործոնն է: Կասկածում եմ: Բանն այն է, որ հայկական թեման այսօր թշնամական արտաքին աշխարհի ընդհանուր պատկերի միայն մի փազլն է: Պատկեր, որ հրամցվում է Ռուսաստանի «բազմոցային» ընտրազանգվածին: Այսօր տրենդը մոբիլիզացնող քարոզչությունն է, եւ նրա գլխավոր սլոգաններից մեկը պարզ է. «մերոնց խփում են, բայց մեր ուժը ճշմարտության մեջ է, մենք կհաղթենք»: Այստեղից են գալիս «Անտիմայդանները», եւ նրանք ուղղված չեն բացառապես հայկական մայդանի դեմ, ամենեւին ոչ: Ուշադրություն դարձրեք Ս. Լավրովի ՄԱԿ-ում ունեցած վերջին ելույթի վրա, նա առաջարկեց մշակել պետական հեղաշրջումներն անօրինական հոչակող փաստաթուղթ: Երեանով չէր չէ՞ նա մտահոգ...



Մերգեյ Մարկեդոնով – Տեղեկատվական պատերազմների ազդեցության մասին: Մասամբ այս հարցով արդեն գրել եմ այստեղ, երբ խոսում էի ֆոնային գործունեների աճած դերակատարության մասին: Բայց ինչ եմ ուզում հատկապես ընդգծել: Այդ տեղեկատվական պատերազմում պահանջվելու են ոչ այնքան մասնագետներ, որքան «լայն պրոֆիլի ունիվերսալներ», որոնց համար միայն ԱՄՆ-ն (կամ Ռուսաստանը vice versa) է ներկայացնում «իրական արժեքը», իսկ մնացածը նյութանյութ են, որ հետաքրքրում են միայն մասնագետների նեղ շրջանակի: Այստեղից էլ այս «դավադրությունների» ու «հեղափոխությունների» փնտրտուքներն են:

Բազմապլան ու բազմերանգ պատկերը վեր է ածվում պարզ սեւ-սպիտակի: Բայց եթե այն յուրացվի, ապա կլինեն որոշակի վտանգներ քաղաքական պլանավորման հարցում:



Րոբիս Բավասարյան – Եվս մեկ հանգամանք, որ կխնդրեի մեկնաբանելն ռուսաստանցի գործընկերները: Խոսքը հեռուստատեսային թոք-շոուների մասնակիցների եւ Ուկրաինայի արեւելքում իրադարձություններ լուսաբանող լրագրողների շարքերը հայկական ազգանուններով լցնելու մասին է: Հասկանալի է, որ այդ մարդիկ օգտագործում են հնարավորությունն իրենց կարիերային ու միջանկյալ խնդիրների լուծման համար, ռուսաստանյան քարոզչամեքենան ներգավում է նրանց, որ ցույց տա «ռուսական-հայկական-ուկրաինական-լիտվական-հրեական ինտերնացիոնալը», որը հակադրվում է «ջիոդա-բենդերովցիներին»: Բայց արդյո՞ք դա լսարանի մոտ տպավորություն է ստեղծում, թե «հայերը մերոնքական են»:

Թող որ երկիրը (Հայաստանը – իմք.) չափազանց մանր է նրան որպես դաշնակից ընդունելու համար, բայց ազգը «Ռուսական աշխարհի» անկասկած մասն են:



Մերգեյ Մարկեդոնով –Անկեղծ ասած «Ռուսական աշխարհի» գործին հայերի գիտակցական ներգրավման ապացույցներ ես չեմ տեսնում... Վստահ չեմ, թե բազմաթիվ ռուսաստանցիներ ընդհանրապես գիտեն, որ հենց Արամ Աշոտովիչն է (Գաբրիելյանովը – իմք.) կանգնած LifeNews-ի ետեւում: Իսկ Կարեն Գեորգիելիչին (Շախնազարովին – իմք.) ընկալում են նախեւառաջ որպես ռեժիսորի, ինչպես եւ Կուրդիյանը այդքան էլ չի ասոցիացվում հայության հետ: Ավելի շուտ՝ ասոցիացվում է դիվային վարքի, կոռեկտ ասեմ՝ էքստրավագանտ կերպի հետ: Այստեղ ուրիշ հարց կա, որը Ատլանտյանի այն կողմի մեր բարեկամներն անվանում են

perception: Այդպես կարող է թվալ ինչ-որ մեկին, որ հայերն են դարձել ռուսաստանյան տեղեկատվական քաղաքականության դեմքը: Դա նման է այն պնդմանը, թե Խորհրդային վաղ հանրապետությունը «ղեկավարում էին հրեաները»...


Միայն իմ զգացողությունները չեն, որ ռուսաստանյան քաղաքականությունը մեծապես ռեակտիվ է, քան պրոակտիվ, կամ՝ ռազմավարական առումով կշռադատված:



Արկաղի Դուբնով – Լիովին համաձայն եմ Սերգեյ Մարկեդոնովի հետ, այստեղ չկա ոչ մի հատուկ խնդիր: Պարզապես ռուսաստանցի հայերը վաղուցվանից ռուսաստանյան սոցիումի, այդ թվում՝ նրա ինտելեկտուալ հատվածի այնքան բնական բաղկացուցիչն են, որ նրանց ներկայությունը միանգամայն ներդաշնակ է: Եվ եթե Երեւանից դա այլ կերպ է երեւում, ապա կարծում եմ դա Ռուսաստանում «հայկականի» կերպարի նկատմամբ լիովին բացատրելի զգացականությունն է:

Մանավանդ, եթե դա չի համընկնում Հայաստանում գերակայող ինքնանույնականացման, այդ թվում՝ դրա աշխարհաքաղաքական եզրի հետ: Ասեմ անկեղծորեն, ինձ՝ ռուսաստանցի հրեայիս, համար հասկանալի է այդ հայացքը, ես ստիպված եմ դրանով ապրել ողջ կյանքիս ընթացքում, եթե անգամ այդ մասին հատուկ չեմ էլ մտածում... Բայց նկատեմ հետեւյալը. երբ ճակատագիրն ինձ հանդիպեցնում է Անատոլի Վասերմանի նման մարդկանց հետ, ապա ես նրանց ընկալում եմ որպես ֆրիկի (անգլ.՝ freak), ոչ ավելին... Փոքր ինչ այլ է վիճակը Էսկիմի դեպքում, նա ուղղակի այնքան էլ պարկեշտ չէ:

Բայց հավատացե՛ք, հենց նրանց հնարավոր չէ «ծախել» Արեւմուտքին որպես Ռուսաստանում գործող իշխանությունների կամ «Ռուսաստանի աշխարհի» հանդեպ հրեաների լոյալության ապացույց: Մեծապես այս ամենը կարելի է ասել նաեւ Ռուսաստանի հայերի մասին:



Սերգեյ Մարգուսյան – Շնորհակալություն Արկաղի հանգամանալից պատասխանի համար, թե չէ այս ամենն այն համատեքստում, որ Մայրան 2-ի առաջին գոհը հայ էր, իսկ դրանից քիչ անց Ավտոմայրանի առաջին գոհն էլ էր ...հայ, Ուկրաինայում միջհայկական առճակատման մի տխուր պատկեր է ձեւավորում:



Լաուրա Բաղդասարյան – Ղարաբաղյան համատեքստում Ռուսաստանն այլ ընկալում ունի. մի կողմ, որը բաց չի թողնում հնարավորությունը ցուցադրելու իր ազդեցությունը Հայաստանի ու Ադրբեյջանի առաջնորդների վրա եւ «փորձառու հրշեջի» իր իմիջը: Դրա օրինակը անցած տարվա օգոստոսյան հանդիպման մեկնաբանություններն էին, հանդիպում, որից անմիջապես հետո բախումների ալիքը սկսեց նվազել: Ընդ որում՝ ալիքի անկումն սկսեց հանդիպմանը նախորդող երկու օրերից, Վլադիմիր Պուտինի երկու երկրների նախագահներին «իր մոտ կանչելու մասին» տեղեկատվության տարածումից անմիջապես հետո:

Բայց իմ կարծիքով՝ Ռուսաստանի խաղաղարար կերպարն այդքան էլ համոզիչ չէ, հատկապես ուկրաինական ռազմական սյուժեների համատեքստում:

Ուկրաինական սցենարների հետ մյուս կապը հայաստանյան մամուլում զարգանում է Ղրիմի թեմայով, «Ինչ կարելի է Յուլիտերին...» բանաձեռով: Ու Հայաստանի հերոս Ռիժկովն էլ, որի մասին նշեց Արկադի Դուբնովն, արդեն հասցրել է դրիմյան կոնտեքստում իջնել ինֆորմացիոն պատվանդանից, հենց որ հնչեցրեց բանաձեռը, որ «Ղարաբաղը բոլորովին այլ խնդիր է, քանի որ Ղրիմը պատմականորեն ռուսական տարածք է, իսկ նրա «վերադարձը»՝ պատմականորեն արդարացի քայլ»:

«Հակառուսաստանյան»

եզրը Հայաստանում եւ Ռուսաստանում



Մերգեյ Մարկեդոնով – Հետաքրքիր է «հակառուսաստանյան» եզրի մասին հարցը: Ամեն մեկը դրա տակ տարբեր բաներ է հասկանում: Ովքեր աջ ծայրահեղ դիրքերում են, Ռուսաստանի գրեթե ամեն մի քննադատի դիտարկում են «հակառուսաստանյան» պիտակի ներքո... Ովքեր իրենց դասում են պայմանական «լիբերալ» թեւին, նշում են, որ այդ «հակառուսաստանյան» եզրն ի սկզբանե կոռեկտ չէ, քանի որ ոչ ոք չունի ազգային շահերը ձեւակերպելու ու դրանք առաջ մղելու մենաշնորհ:

Հետաքրքիր է, որ ինքը՝ Վ. Պուտինը տարվա վերջին որոշակի սահման անցկացրեց ընդդիմության եւ այսպես կոչված « հինգերորդ շարասյան» միջեւ՝ հայտարարելով, որ իշխանության եւ երկրի քննադատությունը նույն բանը չեն: Գնահատականների նման սպեկտր գոյություն ունի:



Բորիս Նավասարդյան – Հայաստանում «հակառուսաստանյան» հասկացության մասին... Փառք Աստծո, առայժմ այն չունի պրակտիկ ռեպրեսիվ կիրառում քաղաքական գործիչների, լրագրողների կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատմամբ (հուսամ, որ մեր միացումը ԵԱՏՄ-ին ոչինչ չի փոխի): Այդ պատճառով այդ հասկացության սահմանագծումը մեզ համար այդքան հրատապ չի: Արտահայտեմ իմ սեփական կարծիքը: «Հակառուսաստանյանն» իր բոլոր դրսևորումներով սկսվում է այնտեղ, որտեղ սպառվում է Ռուսաստանի՝ իր այս տեսքով քաղաքակիրթ գլոբալ գործընթացներին եւ փոխհարաբերություններին ներդաշնակելու ունակությունը: Այս տեսանկյունից երեւոյթն առկա է Հայաստանի հասարակական կարծիքում:



Արկադի Դուբնով - «Հակառուսաստանյան» եզրի մասին... Եթե հիշում եք, վերջերս ՌԴ նապագահի վարչության պետի տեղեկալ Վ.Վոլոդինը մոտավորապես ասաց հետեւյալը. «Կլինի Պուտինը, կլինի Ռուսաստանը, չի լինի Պուտինը, չի լինի Ռուսաստանը»: Պե՞տք է արդյոք ասել, որ նման սահմանափակումների պայմաններում լուրջ դիսկուրսն անհնարին է դառնում: Ներկայիս պարադիգմը հնից քիչ է տարբերվում, եւ եթե պարզունակացնենք, ապա վաղուց ծանոթ է թվում. թագավորը սխալվել չի կարող, քանի որ Ռուսաստանում իշխանությունն Աստծուց է, քննադատել կարելի է եւ պետք է բոյարներին: Կուզեի նաեւ նկատել, որ այսօր Ռուսաստանում ներքաղաքական օրակարգ որպէս այդպիսին գոյություն չունի: Համակարգային ընդդիմությունն այն չի ձեւավորում, կառավարության հասցեին քննադատությունը հաշվի չենք առնում վերը նշված պատճառներով, իսկ ոչ համակարգային ընդդիմությունն անկյուն է քշված որպէս «ազգային դավաճաններ» :

Կոնֆերանսի նյութերն ամբողջությամբ` այստեղ :

<http://regioncenter.info/node/1015>

Օնլայն մամուլի ասուլիսներ հայաստանյան մեդիայի համար



Հասարակական-քաղաքական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, ԱՊՀ երկրների ինստիտուտի բաժնի ղեկավար ՎԼԱԴԻՄԻՐ ԵՎՍԵԵՒԻ (Ռուսաստան) հայաստանյան ՋԼՄ-ների համար կազմակերպված ինտերնետ մամուլի ասուլիսից

13.02.2015

ԹԵՄԱՆ՝ հայ-ռուսական ռազմական համագործակցությունը, Ղարաբաղյան հակամարտության հետ կապված իրավիճակը, Ուկրաինայում զարգացող գործընթացները:

- Կարծում եմ, որ ազգային սահմաններից դուրս գտնվող ռուսաստանյան ռազմակայաններում պետք է ծառայեն միայն պայմանագրային զինծառայողներ: Նրանց ընտրությունն ավելի խիստ է: Եթե լինել այսպիսի որոշում, նման միջադեպն անհնարին կլինել (խոսքը Գյումրիում Ավետիսյանների 7 հոգանոց ընտանիքի սպանության մասին է - խմբ): Բայց պետք չէ ամեն ինչ հանգեցնել ռազմական հանցագործությանը: Ավելի հավանական է, որ եղել են լուրջ կենցաղային պատճառներ, որոնք կապված են հենց Չիտայի, այլ ոչ թե Գյումրիի հետ: Վստահ չեմ նաեւ, որ հենց այդ կրտսեր սերժանտն է կատարել ահավոր հանցագործությունը: Ես ունեմ ՋՈՒ շարքերում ծառայության մեծ փորձ: Կատարվածը բազմաթիվ հարցեր է առաջացնում: Եվ դրանցից բոլորը չէ, որ կապ ունեն նշված զինծառայողի հետ:
- Պերմյակովը ռազմական հանցագործություն է կատարել, քանի որ հրազենը ձեռքին փախել է պահակակետից: Այն, ինչ կատարվեց Գյումրիում, ավելի շուտ կապված է իրադարձությունների հետ, որոնք տեղի են ունեցել դրանից առաջ ՌԴ տարածքում: Վստահ չեմ, որ նա է իսկապես դա կատարել: Պետք է ամեն ինչ պարզել: Եվ դրանից հետո միայն որոշել նրա պատժի ձևերը եւ այդ պատիժը կրելու վայրը:
- Ռուսաստանն ունի արտաքին սպառնալիքների դեպքում Հայաստանը պաշտպանելու պարտավորություն: Ուստի՝ եթե ադրբեջանական կողմը սկսի Հայաստանի սահմանամերձ տարածքների գնդակոծումներ, ապա Մոսկվան բոլոր հիմքերը

կունենա միջամտելու այդ կոնֆլիկտին: Բայց գործնականում դա տեղի կունենա այն դեպքում, եթե սահմանամերձ միջադեպը (ասենք՝ հայկական տարածքների գնդակոծումը) վերաճի սահմանամերձ կոնֆլիկտի:

- Նազարբաևն ու Լուկաշենկոն սկզբունքորեն տարբեր խնդիրներ ունեն: Նազարբաևը չափից շատ տարվեց Բազմավեկտորության խաղով, այդ պատճառով էլ արեւմտյան ազդեցությունից էական կախվածություն ձեռքբերեց... Իսկ Լուկաշենկոն վախենում է գունավոր հեղափոխությունից: Ներկա պայմաններում երկուսն էլ մտավախություն ունեն, որ ՌԴ-ն չի դիմանա Արեւմուտքի ճնշումներին:
- Կիևի կենտրոնական իշխանության թուլացմանը զուգընթաց կամրապնդվի Մոսկվայի հեղինակությունը, այդ թվում՝ հետխորհրդային տարածքներում: Սա թույլ կտա ՌԴ-ին ավելի ակտիվորեն զսպելու կողմերին Լեռնային Ղարաբաղի գոտում:
- Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական պատկերը մեծապես պայմանավորված կլինի ռուս-թուրքական, եւ ավելի քիչ՝ ռուս-իրանական հարաբերությունների ամրապնդմամբ: Ապագայում Մոսկվան, Անկարան եւ Թեհրանը պետք է պայմանավորվեն տարածաշրջանային անվտանգության սկզբունքորեն նոր, ոչ բլոկային համակարգ ստեղծելու մասին: Դա կհանգեցնի Հարավային Կովկասում ԱՄՆ-ի ռազմաքաղաքական դերի նվազմանը:
- Հայաստաի համար լավագույն ճանապարհը սեփական տարածքում ԵԱՏՄ-ի եւ ԵՄ-ի միջեւ կամուրջ ստեղծելու առաջարկությունն ու դրա իրականացումն է: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ Երեւանը շահագոգրված է պահպանելու ԵՄ արտոնությունները եւ այս ուղղությամբ էքսպորտի ներկայիս ծավալները: Եվ լավ կլինեի այդ գործընթացին ներգրավել նաեւ Վրաստանին: Այդ դեպքում հայ հասարակության համար հիմնականում կհանվեր Ռուսաստանի ու Արեւմուտքի միջեւ ընտրություն կատարելու հարցը:

Նյութն ամբողջությամբ այստեղ՝

<http://regioncenter.info/Online-Press-Conference-with-Vladimir-Evseev-rus->

Interviews



Վրաստանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդներից մեկի, Թբիլիսիի քաղաքային խորհրդի (Սակրեբուլոյի) անդամ, քաղաքագետ ԲԵԿԱ ՆԱՑՎԼԻՇՎԻԼԻԻ հայաստանյան ՁԼՄ-ների համար ինտերնետ մամուլի ասուլիսից

ԹԵՄԱՆ՝ Վրաստանը ԵՄ Ասոցիացման պայմանագիրը ստորագրելուց հետո

19.02. 2015

- Վրաստանի համար Հայաստանը առևտրային գործընկերներից մեկն է եղել: Եվ այդ ամենը սահմանափակվում էր հիմնականում Վրաստանից ավտոմեքենաների ռեէքսպորտով: Էլ ավելի կվատանա իրավիճակը, երբ ուժի մեջ մտնեն DCFTA-ն ու ԵԱՏՄ-ն, ինչը կարող է այդ հարաբերությունները մինիմումի հասցնել: Բայց Վրաստանի՝ Առևտրի խոր եւ համապարփակ առևտրի գոտու մասին պայմանագրի (DCFTA) ստորագրումը հնարավորություն է տալիս հայկական ընկերություններին ներդրումներ անել Վրաստանում, արտադրել եւ ազատ մուտք ունենալ դեպի եվրոպական շուկա: Դրա համար երկու երկրների կառավարությունները ստեղծագործաբար պետք է մոտենան հարցին:

Ես նաեւ կավելացնեի, որ ոչինչ չի խանգառում համատեղ ձեռնարկություններ հիմնելուն, որոնք հնարավորություն կտային հայ եւ վրացի ձեռներեցների հաջողությամբ գործունեություն ծավալելու տնտեսական ու մաքսային երկու տարածություններում: Ինչ վերաբերում է քաղաքական հարաբերություններին, ապա դրանք կմնան գործընկերային սկզբունքներին համապատասխան:

- Միխայիլ Սաակաշվիլու թիմի հայտնվելը Ուկրաինայում կապված էր նախեւառաջ այն բանի հետ, որ նրա անձի եւ թիմի շուրջ կար պատկերացում, իբր թե նրանք հետխորհրդային տարածքներում անգերազանցելի բարեփոխիչներ են, եւ դա մակերեսորեն այդպես էլ երեւում էր:

Քիչ դեր չխաղացին Սաակաշվիլու՝ Ռուսաստանի դեմ անվախ մարտիկի իմիջը (հիմնականում Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ կոնֆլիկտի ֆոնին) եւ թավշյա հետափոխությունների ժամանակվանից եկող գերազանց հարաբերությունները ԱՄՆ-ի նեոպահպանողական քաղաքական գործիչների հետ: Վերջիններս առանձնանում են

Ռուսաստանի նկատմամբ ավելի ագրեսիվ դիրքորոշմամբ: ...Բայց եթե ուշադիր դիտարկենք, ապա Շաակաշվիլին ավելի շատ նման էր ոչ թե Բարեփոխիչի, այլ բռնապետական ռեժիմի առաջնորդի:

- Եթե ի մի բերենք, ապա ուկրաինական իշխանությունների այդ քայլը պայմանավորված է Միխայիլ Սաակաշվիլու նեոպահպանողական քաղաքական շրջանակների հետ հարաբերություններով եւ ուկրաինական իշխանությունների հույսով՝ Սաակաշվիլու իմիջի միջոցով լեգիտիմացնելու Բարեփոխումները սեփական երկրում: Հուսով եմ, որ այդ Բարեփոխումները նույնքան դաժան չեն լինի, որքան Վրաստանում էին:
- Մ. Սաակաշվիլու իշխանության վերադարձի մասին. չնայած նրա ու թիմակիցների կողմից այդ մասին տարփողումներին, դա անհնարին բան է:

Հասարակության մեջ հասկանում են, որ Սաակաշվիլին չունի ռեսուրսներ դա իրագործելու ոչ հեղափոխության, ոչ էլ ընտրությունների միջոցով: Հետեւաբար՝ նա այլընտրանք չէ իշխանությանը: Իսկ հաշվի առնելով հասարակության մեծ մասի բացասական վերաբերմունքը, դա բացառվում է:

Չնայած Սաակաշվիլին կողմնակիցներ ունի, Եվրոպայում Ամերիկայից ավելի քիչ: Առաջ արեւմտյան աջ քաղաքական շրջանակների համար Սաակաշվիլին նեոլիբերալիզմի բաստիոն էր, ինչն ադ շրջանակների կողմից ընկալվում է որպես առաջընթաց ու ժողովրդավարություն: Հատկապես պետք է առաձնացնել մի շարք պատգամավորների Եվրոպական ժողովրդական կուսակցությունից եւ Ամերիկայում նեոպահպանողական քաղաքական գործիչներին: Իհարկե, նրանց այդ սատարումը երկրում իրավիճակը չի փոխելու, հակառակը՝ կարող է հակաարեւմտյան տրամադրություններ հաղորդել հասարակության մի հատվածին:

Նյութն ամբողջությամբ այստեղ՝ <http://regioncenter.info/Internet-press-conference-with-Beka-Natsvlishvili-rus-Interviews>